Արձանագրություն N 3

«ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Արշակունյաց 135 «23» «10» 2017թ
ժ.14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Կարապետյան (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Հարությունյան (գնահատող) Ս. Գրիգորյան (գնահատող),
Ա.Շադյան, (բացող) Ն.Սաֆարյան (բացող)
Հանձնաժողովի քարտուղար՝ Նաիրա Մկրտչյանը

1. Տեղեկություններ «ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնանշման հարցման հայտեր ներկայացրած մասնակիցներ մասին

(Լ.կարապետյան)

Ընդունել ի գիտություն, որ հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերը հրապարակելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 14:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

1	«Մաքսիուր» ՍՊԸ	-	ք. Երևան, Տպագրիչների 8, ՀՎՀՀ 02571605, էլ. հասցե՝ maxhur.tender@mail.ru
2	«ՖԼԵՇ» ՍՊԸ	-	ք. Երևան,Ե.Կողբացու 30, ՀՎՀՀ 01808789, էլ. հասցե՝flashltdtender@gmail.com,

Որոշում թիվ 1.

Հրավերով սահմանված՝մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

2.1 <<Մաքսուր>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում էր 1-ին չափաբաժնով ավիավառելանյութի համար հատկացված ֆինանսական միջոցները (գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը) և քանի որ 1-ին չափաբաժնով հայտ է ներկայացրել միայն <<Մաքսուր>> ՍՊԸ-ն, հիմք ընդունելով <<Գնումների մասին >> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1) ենթակետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և գների նվազեցման նպատակով <<Մաքսուր>> ՍՊԸ-ին հրավիրել բանակցությունների ս/թ հոկտեմբերի 20-ին ժամը 12:00-ին, ք.Երևան, Արշակունյաց 135 հասցեում:

Կազմակերպված բանակցությունների ընթացքում <<Մաքսուր>> ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի մասով առաջարկված գինը նվազեցվեց **14 550 000** ՀՀ դրամի:

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների արդյունքները ամփոփված են սորև բերված աղյուսակում.

	Մասնակից	Նախահաշվային գին	<<Մաքսուր>> ՍՊԸ			<<Ֆլեշ>> ՍՊԸ		
N	Ապրանքի անվանումը		արժեք	ԱԱՀ	Ընդհանուր	արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
1								
1	Ավիացիոն կերոսին	14550000	12125000	2425000	14550000	-	-	-
2	Բենզին պրեմիում	1600000	1296666,7	259333,3	1556000	1243333,33	248666,67	1492000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. <u>Տեղեկություն «ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակիցների մասին</u>

(Լ.Կարապետյան)

3.1 Ս/թ հոկտեմբերի 23-ի (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց **«Մաքսիուր» ՍՊԸ**-ն, 2-րդ չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց **«ՖԼԵՇ» ՍՊԸ-ն:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4. Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Լ.Կարապետյան)

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը հանձնաժողովը որոշեց՝

1) Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ ներկայացնել հարցում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից <<Ֆինանսական չափորոշիչներ>> որակավորման չափանիշներին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում հանձանժողովի կողմից կմերժվի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Լ.կարապետյան)

Հանձնաժողովը որոշեց **«ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-17/2»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 14:30-ին, ք. Երևան, Արշակունյաց 135 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Լևոն Կարապետյան
Անդամներ՝		Անի Շադյան
		Նորայր Սաֆարյան
		Սպարտակ Գրիգորյան
		Էդուարդ Հարությունյան
Քարտուղար՝		Նաիրա Մկրտչյան